1885-1908 ԹԹ. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՀՐԱՆԴ ԳԱՆԳՐՈՒՆՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ՍԱՐԳՍՅԱՆ Ս. Թ.

Հայ ազգային-ազատագրական պայքարը վճռական փուլ թևակոխեց XIX դ. 80-ական թվականներից և, փաստորեն, ավարտվեց 1908 թ. երիտթուրքական սահմանադրության ընդունմամբ: Առ այսօր մեր պատմագիտության մեջ բաց են մնացել այդ շրջանին վերաբերող լուսաբանման կարոտ շատ հարցեր, ինչպես՝ ազատագրական պայքարում առկա տարբեր ուղղությունները, ազատամարտի արդյունավետության հարցը, արևմտահայության առաջին զանգվածային ջարդերի 1890-ական թթ. պատճառները և այլն: Դրանք հարկավոր է ուսումնասիրել առանձին-առանձին և, միևնույն ժամանակ՝ մեկ ամբողջության մեջ: Արդյո՞ք կապ կար հայ ազգային կուսակցությունների՝ առավել հաճախ մեծ տերությունների միջամտության հույսով ազատագրական պայքարի կազմակերպման և այդ ջարդերի միջև: Արդյո՞ք մեծ տերություններին ապավինելով և մասնակի դրվագների կազմակերպումով, թե՞ մեկ նպատակի շուրջն ուժերի համախմբումով էր հնարավոր հասնել ակնկալած հաղթանակին: Սրանք և բազմաթիվ այլ հարցեր դեռևս չեն ստացել իրենց վերջնական պատասխանները: Իսկ դրանք, թերևս, կարելի է գտնել ժամանակաշրջանի վերաբերյալ ստեղծված կուսակցական գրականության ուսումնասիրության և այն պատմագիտական հայեցակարգերի ընդունման ճանապարհով, որոնց ընդհանրությունը տեսնում ենք երեք կուսակցությունների գործիչների և պատմաբանների գրական ժառանգություններում:

Ի վերջո, ցավալի, բայց, անժխտելի փաստ է, որ հայ ազգային-ազատագրական պայքարը, որը ձևավորվեց արևմտահայ խնդրի շուրջ, պարտվեց: Այս պարտության պատճառների համակողմանի ընկալումն անհնար է առանց վերլուծելու ինչպես այդ պայքարի վերաբերյալ ստեղծված բազմաթիվ ու բազմաբնույթ աշխատությունները, այնպես էլ կուսակցական պատմագիտական միտքը:

Հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության 1885-1908 թթ. շրջանի վերաբերյալ վստահ կարելի է պնդել, որ Հնչակյան կուսակցությունը ևս արմենականների նման չունի կուսակցական պատմագրություն[1]: Ուստի, ինչպես Արմենական կուսակցության պարագայում, այս դեպքում էլ խոսք կարող է լինել այդ

---

[1] *Արմենական կուսակցական գործիչների ուսումնասիրությունների և հուշագրությունների մանրամասն և քննական վերլուծությունը տե՛ս* **Սարգսյան Ս. Թ.**, *1885-1908 թթ. հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը արմենական գործիչների գնահատմամբ, Ե., 2010:*

ժամանակաշրջանի հայ ազատագրական պայքարի վերաբերյալ հնչակյան կուսակցականների՝ հիմնականում պատմագիտական մտքի մասին:

Հնչակյան կազմակերպությունը հայ իրականության մեջ ծնունդ առած երկրորդ ազգային կուսակցությունն էր: Այն՝ որպես ուժեղ, կուռ և գործուն կառույց, փաստացի ունեցավ մոտ 15-ամյա գործունեություն: Կուսակցությունը, 1896 թ. սկսած, անընդհատ գտնվում էր ներքին տարաձայնությունների հորձանուտում, որոնք ի վերջո պառակտեցին և սաստիկ թուլացրին այն: Եվ, ըստ էության, հնչակյաններն այլևս երբեք նախկին ուժը, հզորությունն ու հեղինակությունը չունեցան և չկարողացան իրականացնել այն գործառույթները, որոնք նախանշված էին իրենց ծրագրերում:

Հնչակյան կուսակցությունը ձևավորվեց 1887 թ. Ժնևում, եվրոպական համալսարաններում սովորող մի խումբ հայ ուսանողների կողմից[2]: Ավետիս ու Մարո Նազարբեկյանների և Գևորգ Ղարաջյանի հեղինակած նրանց ծրագիրը բաղկացած էր «Հեռավոր» և «Մոտակա» նպատակներից[3]: Հաշվի առնելով ստեղծված ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական բարդ ու ոչ նպաստավոր պայմանները՝ հնչակյանները գիտակցում էին, որ օսմանյան բռնապետության պայմաններում հնարավոր չէր իրականացնել լայնածավալ գործողություններ: Բացի այդ, բացակայում էին անհրաժեշտ ֆինանսական միջոցները, չկային համապատասխան փորձ և հմտություն ունեցող անհատներ, որոնք կկարողանային կրթել և ազատագրական պայքարի առաջնորդել արևմտահայությանը: Հնչակյանների ղեկավարությունը, հաշվի առնելով այդ պայմանները, հենց սկզբից որդեգրել էր յուրօրինակ մարտավարություն. ամեն գնով ոտքի հանել դարավոր ընդարմացումից արթնացող արևմտահայությանը՝ այդ պայքարում մշտապես ակնկալելով եվրոպական երկրների օգնությունը: Կուսակցության մարտավարության առանձնահատկությունն այն էր, որ որդեգրել էր երկու հիմնական սկզբունք կամ մոտեցում, որոնք իրենց արտահայտությունն են գտել նրա ծրագրային դրույթներում. ա) ազգային-ազատագրական պայքարը կազմակերպել այն բոլոր միջոցներով, որոնք հնարավոր կդարձնեն արևմտահայության ազատագրությունը թուրքական դժնդակ տիրապետությունից, բ) ազատագրված հայրենիքում հաստատել սոցիալիստական կառավարման համակարգ: Սա նախ և առաջ պայմանավորված էր նրանով, որ Հնչակյան կուսակցությունն այն քաղաքական կազմակերպություններից էր, որ ձևավորվել էր ռուսական նարոդնիկապլեխանովյան գաղափարախոսության ազդեցության ներքո և ներառել մարքսիստական տեսության շատ դրույթներ:

---

[2] *Մանրամասն տե՛ս* **Համբարյան Ա.,** *Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990,* **Հովհաննիսյան Գ.,** *Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն, Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885-1914 թթ.), Ե., 2003, էջ 26-76:*

[3] *Ծրագիր Հնչակեան կուսակցութեան, երրորդ հրատարակութիւն հանդերձ մեկնութիւններով, Լոնտոն, 1897:*

XX դ. սկզբներին, կորցնելով իր ղեկավար գործիչների մեծ մասին, Հնչակյան կուսակցությունը զգալիորեն զիջեց դիրքերը և գնալով ավելի ու ավելի կազմալուծվեց՝ հետագայում դադարելով էական դերակատարություն ունենալուց:

Իրենց ծավալած գործունեության մասին հնչակյան գործիչները քիչ չեն գրել: Սակայն հիմնականում փոքրածավալ հոդվածներ, որոնք սփռված են հնչակյան մամուլում[4]: Հիմնարար, ամբողջական ու ծավալուն ուսումնասիրությունները քիչ են, սակայն եղածն էլ բավարար է, որպեսզի ուսումնասիրողը պատկերացում կազմի կուսակցության գործունեության սկզբունքների մասին և նրա պատմագիրների ու հուշագիրների պատմագիտական ընդհանրացումներից առանձնացնի այն հիմնախնդիրները, որոնք վերաբերում են ազգային-ազատագրական պայքարին:

Նշենք, որ այդ աշխատանքներում առկա պատմագիտական մոտեցումները հաճախ անաչառ չեն, մասնավորապես այն դեպքերում, երբ խոսքը մյուս կուսակցությունների գործունեության մասին է:

Հնչակյան կուսակցության անդամ Հրանդ Գանգրունու «Հայ յեղափոխութիւնը օսմանյան բռնատիրութեան դէմ» ուսումնասիրությունը[5] XIX դ. վերջի և XX դ. սկզբի հայ ազգային-ազատագրական պայքարի պատմագիտության մեջ կարևոր ներդրում է: Այն պարունակում է բավական հասուն և ժամանակի համար լուրջ եզրահանգումներ: Սակայն ընդգծենք, որ փոքր-ինչ անհասկանալի է այդ ազատագրական պայքարի (ըստ հեղինակի, հայ հեղափոխության[6]) պատմության պարբերացումը, հատկապես այդ կարևորագույն փուլը 1910 թվականով ավարտելը: Չէ՞ որ միանշանակ պարզ է, որ հայ ազատագրական պայքարի այդ փուլն ավարտվեց 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումով: Գրքի վերնագրից նաև այն տպավորությունն ես ստանում, թե «հայ յեղափոխութիւնը» սկսվել է 1890 թվականից: Այնինչ, իրականում, այն սկզբնավորվել է 1880-ական թթ. երկրորդ կեսից, երբ ձևավորվում էին ազատագրական խմբակները, ինքնաբուխ ծավալվում՝ ֆիդայական շարժումը և, վերջապես, կազմավորվում՝ կուսակցությունները՝ ի դեմս նրանց առաջնեկ Արմենականի[7]: Ակնհայտ է, որ Հ. Գանգրունին, 1890 թվականը ջրբաժան է ընտրել՝ ցանկանալով հայ հեղափոխական շարժումների սկզբնավորումը տեսնել հնչակյան ձեռնարկներով (Էրզրումի, Գում-Գափուի): Սակայն միանգամայն անհասկանալի է 1910-ի ընտրությունը, քանզի 1908-ից հետո մինչև այդ թվականը և դրանից հետո էլ հայ ազատագրական պայքարի

---

[4] «Հնչակ», «Գաղափար», «Մարտ», «Նոր կյանք», «Ապտակ», «Զայն հայրենյաց» և այլ պարբերականներ ողողված էին կուսակցության ծրագրի, ռազմավարության, մարտավարության, ինչպես նաև տեսական ու գործնական բնույթի այլ հարցերի մասին հրապարակումներով:

[5] Տե՛ս **Գանգրունի Հր.,** Հայ յեղափոխութիւնը օսմանեան բռնատիրութեան դէմ 1890-1910, Պէյրութ-Լիբանան, 1983:

[6] Հեղինակը «հեղափոխություն» ասելով հասկանում էր հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը: Այդպես է մտածում թե՛ ժամանակի, թե՛ մերօրյա արևմտահայ ուսումնասիրողների մեծ մասը:

[7] Այս հարցերի առնչությամբ գրվել են մեծ քանակությամբ արժեքավոր ու հիմնարար ուսումնասիրություններ, որոնցում մանրամասն ու հանգամանալից բացատրված ու ապացուցված է խնդիրը: Այնպես որ, այդ վաղուց հայտնի ճշմարտություն է:

շարունակությունը կարծես թե չի էլ նշմարվում: Եթե ազատագրական պայքարի ելակետ համարենք հայ կամավորական շարժումը, ապա այն սկզբնավորվեց 1912 թ.՝ Գ. Նժդեհի և Անդրանիկի վաշտով Բալկանյան պատերազմին մասնակցությամբ և զանգվածային բնույթ կրեց 1914 թ. աշնանը, այսինքն՝ դարձյալ ոչ 1910-ին: Թեև դա էլ կարելի է վիճարկել, որովհետև, կարծում ենք, որ ազատագրական պայքարը, որին կարող է դիմել որևէ ճնշված ժողովուրդ, ճիշտ չի լինի բացարձակորեն նույնացնել կամավորական շարժման հետ, որն սկսվել ու ծավալվել էր ստեղծված իրավիճակի հետևանքով (անշուշտ, նաև հանուն ազգային նպատակների) իրար դեմ պատերազմող պետություններից մեկի օգտին, մյուսից ազատագրվելու հույսով: Ընդգծենք նաև, որ հեղինակն իր աշխատությունում 1910 թ. հաջորդող իրադարձություններին էլ է անդրադառնում, այնպես որ, առավել քան անիմաստ է դառնում վերնագրում նշված 1890-1910 թվականների առանձնացումը՝ որպես հայ հեղափոխության տարիներ:

Այս ամենով հանդերձ, Հ. Գանգրունու աշխատությունը գնահատելի է հետևյալ առումներով. ա) հագեցած է փաստական առատ նյութերով, բ) արտահայտում է հեղինակի ինքնուրույն եզրակացությունները, որոնք շատ հաճախ միանգամայն ընդունելի են: Դա հատկապես վերաբերում է Հայկական հարցի նկատմամբ մեծ տերությունների վարած քաղաքականությանը նրա անդրադարձներին:

Հ. Գանգրունու աշխատության հիմնական և առավել բնորոշ կողմերն առանձնանում են «Մուտք» անվանված փոքրիկ ներածականում, որտեղ հեղինակը բավական հետաքրքիր հարցադրումներ է կատարում: Դրանցից ամենակարևորը վերաբերում է «հայ յեղափոխութեան» օրինաչափության խնդրին: Առանց կոնկրետ անուններ տալու, քննադատելով բոլոր նրանց, ովքեր հայ հեղափոխական շարժումներով էին պայմանավորում Հայոց եղեռնը, Գանգրունին հետևյալ հարցն է առաջ քաշում և ինքն էլ փորձում գտնել պատասխանը. «Հայերը կրնայի՞ն չդժգոհել եւ սպասել աւելի լայն օրերուն, զենքի ուժով մարդկային իրենց տարրական իրաւունքները ձեռք ձգել կարենալու համար[8]«: Հ. Գանգրունու պատասխանն այս հարցին միանգամայն ժխտական է՝ հետևյալ պատճառներով. ա) «Կարմիր սուլթանը» ձգտում էր հայկական վեց նահանգներում հայերի թվաքանակը արհեստականորեն նվազեցնել և նրանց վերածել փոքրամասնության: Այդ նենգ նպատակն իրականացնելու համար հայերի նկատմամբ վարում էր տնտեսական դաժան քաղաքականություն, նրանց ենթարկում բազմատեսակ հալածանքների, որոնց հետևում էր շարունակական արտագաղթը: բ) Քրդերին խոստանում էր ինքնավարություն, նրանցից կազմում «համիդիե» զբնդեր, շնորհում բազմաթիվ արտոնություններ և տրամադրում հայերի դեմ:

Հ. Գանգրունին մի հետաքրքիր տեսակետ է առաջ քաշում. «Թուրքերը կորսցնելէ ետք Պալկաններէն ներս իրենց ստրկացուցած հողամասերը, կրնայի՞ն հանդուրժել, որ Վեց Նահանգներուն մէջ հայերը մեծամասնութիւն կազմած դրութեամբ գոյատեւէին: Հայերը

[8] *Նույն տեղում, էջ 7:*

եթէ ոչխարամիտ, հլու կեավուր մնային, կարելի էր սպասել որ անոնք չջարդուէին եւ փոքրամասնութիւն դառնալու վտանգէն հեռու մնային, սուլթանի կամ իթթիհատի օրով:

Բայց չէ՞ որ իսլամ քիւրտերը այդ ճամբան կը հետեւէին եւ Քէմալի պէս «դեմոկրատ» գլուխներն անգամ վճռական պահուն զարկին անոնց...»[9]: Հարկավ, ցանկացած նվաճված ժողովուրդ տիրապետողի կողմից ենթարկվում է հարստահարման, ձուլման և դանդաղ ոչնչացման վտանգին: Եվ այս դեպքում նրա ազատագրական պայքարն օրինաչափ է: Սրանում Հ. Գանգրունու հետ չի կարելի չհամաձայնվել: Բայց թե՛ նա, թե՛ հայ ազատամարտի պատմությանն անդրադարձած մյուս պատմաբաններն ու հուշագիրները, կատարելով նման ճիշտ հարցադրումներ, քաջություն չեն ունեցել մատնանշելու այդ ազատամարտում հայ քաղաքական առաջնորդների գործած սխալ-ները:

Անցյալի սխալների խոստովանությունն ամենևին չի նշանակում թերագնահատել ազատագրական պայքարի գործիչներին, կասկածի տակ առնել նրանց հայրենասիրությունը: Բայց անհրաժեշտ է չանտեսել, որ ջարդերն Արևմտյան Հայաստանում առաջին անգամ զանգվածային բնույթ կրեցին հատկապես մեր երկու կուսակցությունների (Հնչակյան և Դաշնակցություն)՝ պայքարի թատերաբեմ մտնելու պահից, մանավանդ այդ պայքարի այն դրվագների սկզբնավորումով, որոնք իրականացվում էին մեծ տերությունների միջամտության հույսով: Երբեմն այս հարցադրմանն այն պատասխանն է տրվում, թե դրանով նպաստում ենք թուրք պատմագրության՝ ջարդերի հիմնավորման տեսակետներին: Ամենևին ոչ. այստեղ խնդիրը վերաբերում է պայքարի այնպիսի միջոցների ընտրությանը, որոնք առիթներ չէին տա, և որոնց չէին զուգորդվի զանգվածային ջարդերը: Չափազանց կարևոր է նաև ջարդերի պատճառներից առիթների առանձնացումը, որոնք տալիս էին հայ ազատագրական պայքարի մասնակի դրվագները[10]: Սա խոստովանում են նաև ժամանակակիցները[11]:

Այնպես որ, անընդհատ կրկնել հինը, թե մենք միշտ իրավացի էինք, թուրքերն էին ոճրագործ, չենք հասնի պատմական դասերի ճիշտ ընկալման: Որ թուրքերն իրոք ոճրագործ էին, դրանում երկրորդ կարծիք լինել չի կարող[12]: Բայց արդյոք ճի՞շտ էր ընտրված այդ ոճրագործին հաղթելու մեր ուղին: Միանշանակ՝ ոչ: Եվ, չնայած գործադրած բուռն ջանքերին, դրա հակառակը չի կարողանում ապացուցել նաև Հ. Գանգրունին: Համոզվելու համար դիմենք հենց իր՝ Հ. Գանգրունու օգնությանը: Դրա համար, նախ՝ ներկայացնենք աշխատության Ա գլուխը («Միջազգային կացութիւնը եւ

---

[9] Նույն տեղում, էջ 9: Այս և մեջբերումներում առկա հետագա ընդգծումները մերն են:

[10] Այլ առիթներով բազմիցս ընդգծել ենք, որ հայերի կոտորածները Թուրքիայում պետական, ծրագրված քաղաքականության արդյունք էին. խոսքը ճիշտ գործելակերպի և թշնամուն ավելորդ առիթներ չտալու մասին է:

[11] Տե՛ս, օրինակ՝ Հրայր Դժոխքի նամակները (Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, Պոսթըն, 1934):

[12] Այդ կապակցությամբ համաշխարհային մասնագիտական և գեղարվեստական գրականության մեջ առկա են բազմաթիվ վկայություններ, որոնց թվարկումն իսկ ժամանակի իզուր կորուստ ենք համարում:

մեծերու դիրքորոշումները 1890-ական թուականներուն»): Այստեղ հեղինակը բավական ինքնատիպ վերլուծություններ է կատարում 1890-ական թթ. միջազգային կացության վերաբերյալ և հայտնում միանգամայն յուրահատուկ և տարածում գտածին հակառակ հետևյալ տեսակետը՝ «Օսմանեան բռնատիրութենէն ազատագրուած պալքանեան ժողովուրդները շատ մօտ չէին զգար ինքզինքնին Ռուսիոյ: Անոնք կը խորհէին Գերմանիոյ ապաւինել, իրենց «մնայուն հողային պահանջները» իրագործելու համար»[13]: Հարկավ, դա այդպես էր, բայց այստեղ չպետք է այն տպավորությունն ստեղծվի, թե Ռուսաստանն ընդհանրապես կողմ էր անկախ Հայաստանի գոյությանը և հատկապես բարենորոգումների ծրագրից առաջ: Ազատագրված Բալկանյան ժողովուրդները, Հ. Գանգրունու կարծիքով, չէին ցանկանում Ռուսաստանի ձեռքին «գործիք» դառնալ և «կ'աշխատէին ամէն գնով իրենց գերիշխանութիւնը (անկախությունը – Ս. Ս.) պահել»[14]:

Հ. Գանգրունին, անդրադառնալով Անգլիա-Թուրքիա հարաբերություններին, այն տեսակետն է հայտնում, թե Անգլիան, որը ձգտում էր Թուրքիայի բարեփոխմանը, գտնելով, որ նա կարող է «օգտակար հանդիսանալ Հնդկաստանի ճամբու ապահովութեան», աստիճանաբար համոզվում է, որ դա անհնար է՝ կարծելով, «թէ Պալքանեան ազատագրուած երկրները աւելի արագ զարգանալու ատակ են, ուստի այդ երկրներում զօրացման ի նպաստ դիրքորոշուիլը կարևոր նկատեց եւ նոյնիսկ Մերձավոր Արևելքի մէջ ազգային պետութիւնները (արաբ, հայ, քիւրտ) մէջտեղ գալը արգելք մը չնկատեց՝ «Հնդկաստանի ճամբուն» ապահովութեան»[15]:

Հեղինակը, հենվելով անգլիական աղբյուրների և դիվանագետների հայտնած տեղեկությունների վրա (Ջ. Բրայս, Բիրս և այլն), քննելով և վերլուծելով դրանք, հանգում է այսպիսի եզրակացության. Անգլիայում թուրքամետ և հակաթուրքական ուժերի միջև, սկսած 1870-ական թթ., պայքար էր ծավալվել, և 1880 թ. Գլադստոնի հաղթությամբ իշխանության են գալիս հակաթուրքական ուժերը: Սակայն, կարծում ենք, որ հեղինակն ամբողջ խորությամբ չի կարողացել ըմբռնել քաղաքական գործընթացների էությունը: Հակառակ դեպքում կհանգեր ամենակարևոր եզրակացությանը՝ թե Անգլիան, թե Ռուսաստանը և թե մյուս պետությունները Թուրքիայի հետ հարաբերությունները ջերմացնում կամ սառեցնում էին՝ ելնելով բացառապես Թուրքիայի վրա մեկ ուրիշ պետության քաղաքական ազդեցության չափաբաժնից: Թե բալկանյան ժողովուրդների և թե հայերի նկատմամբ «բարյացակամությունը» ի հայտ էր գալիս հատկապես այն ժամանակ, երբ Թուրքիայի հանդեպ նրանք ունենում էին ինչ-ինչ խնդիրներ: Ուստի պատահական չէր, որ երբ 1890-ական թթ. Գերմանիայի ազդեցությունը Թուրքիայի վրա շարունակաբար աճում էր, Անգլիան ևս՝ հանձին լորդ Սոլսբերիի, սկսեց ջանադրաբար ճնշում գործադրել Թուրքիայի վրա՝ հօգուտ հայկական բարենորոգումների: Իսկ նրանից ոչնչով հետ չէր մնում նաև Ռուսաստանը:

---

[13] **Գանգրունի Հ.,** *նշվ. աշխ., էջ 11:*

[14] *Նույն տեղում:*

[15] *Նույն տեղում:*

Այս ամենին Հ. Գանգրունին անդրադառնում է հպանցիկ, ինչն էլ, ցավոք, հեղինակին հնարավորություն չի տալիս կատարել ճիշտ եզրակացություններ: Իսկ այդպիսի հետևությունների հանգելու համար կարող էր նպաստել թեկուզ և այն փաստը, որ 1895 թ. մայիսյան բարենորոգումների ծրագիրը, որը սուլթանն ընդունում է հոկտեմբերի 20-ին, այդպես էլ չի իրականանում: Ընդհակառակը՝ դրան հաջորդում են հայերի առաջին զանգվածային ջարդերը: Իսկ ինչո՞ւ: Որովհետև սուլթանը համոզված էր, որ այդ ծրագիրը պարտադրող տերությունների միջև առկա հակասություններն արգելք կդառնան Թուրքիայի վրա համատեղ ճնշման համար: Ճշմարտության դեմ չմեղանչելու համար ասենք, որ այդ խնդիրներին անդրադառնալով՝ Հ. Գանգրունին այսպիսի եզրակացությանը նպաստող մեջբերումներ է անում, սակայն այդպիսի եզրակացություն նրա ուսումնասիրության մեջ չենք տեսնում:

Ա գլխի երկրորդ փոքրիկ ենթագլխում («Մեծ պետութիւնները Թուրքիոյ յանդէպ») Գանգրունին այլ հեղինակների տեսակետներ է վերաշարադրում, որից կարելի է եզրակացնել, որ մեծ տերություններից որևէ մեկի՝ նեղուցներին տիրանալու ձգտումը, ի վերջո, մյուսին ստիպում էր դառնալ թուրքանպաստ, իսկ այս դեպքում երկրորդական էր դառնում Հայկական հարցը: Նրանցից որևէ մեկին տվյալ իրավիճակում ավելի ձեռնտու էր դառնում հիվանդ Թուրքիայի գոյության հանդուրժումը, քան թե, օրինակ, Անգլիայի կամ Ռուսաստանի կողմից այդ խիստ կարևոր ռազմավարական նշանակության դիրքերին տիրապետելը: Սա է 1870-1890-ական թթ. Թուրքիայի նը-կատմամբ մեծ տերությունների հակասական մոտեցման հիմքը, որը Գանգրունին ընթերցողին հասկանալի է դարձնում այլ հեղինակներից արված մեջբերումներով: Հասկանալի է դարձնում, ոչ թե կատարում սեփական եզրակացություններ:

Կարծում ենք, որ աշխատության Բ գլխի շարադրանքը շատ խրթին է, չկա պարբերացում: Հեղինակը մեկ անդրադառնում է XIX դարասկզբի, մեկ դարակեսի, մեկ էլ դարավերջի իրադարձություններին: Ի դեպ, ճիշտ չի ձևակերպված նաև այս գլխի վերնագիրը՝ «Հայ Յեղափոխութեան ազատագրական պայքարը»: Այն ճիշտ կլիներ վերնագրել կամ «Հայ յեղափոխական պայքարը», կամ «Հայ ազատագրական պայքարը»: Գլխի բավական ծավալուն մի մաս հատկացված է տարբեր հեղինակներից կատարված մեջբերումներին (Վ. Պարսամյան, Վ. Ալազան, Վ. Նորենց, Մ. Մեծարենց, Զ. Գրիգորյան, Մ. Օրմանյան, Ռ. Հովհաննիսյան, Լեո, Հ. Ամառյան և այլք): Ընդ որում, նպատակը մեկն է՝ ցույց տալ, որ հայ հեղափոխությունը օրինաչափ էր, և դատապարտելի է թուրքական այն տեսակետը, թե «Հայկական ջարդերուն պատասխանատուն ո՛չ թէ սուլթան Համիտն ու երիտասարդ թուրքերն են, այլ՝ հայերը, որոնք ըմբոստացան, վրեժխնդրութեան դիմեցին եւ հաւատարիմ չգտնուեցան օսմանեան հայրենիքի պաշտպանութեան

հարցին մէջ, ատոր համար ալ ջարդուեցան»[16]:

Դրվատելի է, որ նա մինչև մեջբերումները քննադատում է հայ այն հեղինակներին, որոնք փորձում են ջարդերը պայմանավորել հայ հեղափոխությամբ: Ընդ որում, Գանգրունին նրանց (Լեո, Ա. Կարինյան) դրույթները փորձում է չեզոքացնել՝ հակառակ տեսակետն ունեցող հեղինակներից (Հ. Թամրազյան, Հ. Ղազարյան, Վ. Պարսամյան, Ռ. Հովհաննիսյան և այլն) մեջբերումներ կատարելով:

Այսուհանդերձ, հարկ է պարզապես մեկ անգամ ևս շեշտել, որ հայ ազատագրական շարժումն օրինաչափ էր, բայց նրա մարտավարությունն ուներ լուրջ թերություններ: Այս ճշմարտությունը չխոստովանելով՝ ոչինչ չենք շահի:

Հ. Գանգրունին նույնպես, ինչպես գրեթե բոլոր կուսակցական պատմաբանները, իր կուսակցության մարտավարության մեջ թերություններ նույնիսկ չի էլ որոնում: Բայց ահա նույն նպատակով (օրինակ՝ մեծ տերությունների միջամտության հույսով) կազմակերպված դաշնակցական շատ ձեռնարկներ քննադատում է:

Հայոց ջարդերի հիմնական պատճառը նա համարում է պանթուրքիզմը, որի ճանապարհին գտնվում էին, ըստ նրա՝ հայը, ռուսը և վրացին[17]: Թեպետ վրացու՝ այդ ճանապարհին գտնվելը տարօրինակ է հնչում, իսկ ռուսի պարագայում, թերևս ավելի ճիշտ կլիներ նշել, որ նրա աշխարհակալ տերությունն արգելք էր այդ ծրագրին, բայց հայը իսկապես որ խոչընդոտ էր այդ ճանապարհին, անհերքելի ճշմարտություն է:

Գնահատելի է նաև Հ. Գանգրունու այն միտքը, թե «90ական թուականներու մեր պատմութեան ազատագրական շարժումները խորքին մէջ ոչ մէկ նուաճողական ձգտում կրնային ունենալ: Փաստորէն՝ հայ յեղափոխութիւնը, դանակը ճիտին իջեցնել փորձող սուլթան Համիտի բազուկը վանելու փորձ կատարած է»[18]: Իհարկե, առանց նվաճողական բառի օգտագործման ինքնին պարզ է, որ մեր ազատագրական պայքարի նպատակը մեր պատմական տարածքների նկատմամբ սեփական իրավունքների վերականգնումն էր: Բայց դրվատելի է, որ Հ. Գանգրունին այս պարզ ճշմարտությունն արտահայտել է թերևս առաջին անգամ: Հայ ազատամարտի տնտեսական դրդապատճառներից բացի, հետաքրքիր է նաև Գանգրունու կողմից դրանցում հետևյալ պատճառների ներառումը. «…սահմանափակ ըլլալով մեր հնարաւորութիւնը, պարտավոր էինք նկատի ունենալ 6 Մեծ պետութիւններուն մեջամտելու հնարավորութիւնը, գիտնալով հանդերձ, որ անոնք աւելի շատ տարուած էին իրենց տնտեսական շահերէն, բայց եւ գիտէինք, որ անոնց հակասութիւններէն օգտուիլը

[16] Նույն տեղում, էջ 22:
[17] Նույն տեղում, էջ 39:
[18] Նույն տեղում, էջ 40:

կենսական նշանակութիւն կրնար ունենալ մեր պայքարի յաջողութեան համար»[19]: Եվ, որ առավել, քան հետաքրքիր է՝ «Հայ Յեղափոխութիւնը, հայ մասսայի կազմակերպման վրա աւելի շատ յենած էր, բայց մասսան կազմակերպելը՝ տարիներու երկար պայքարի բովէն անցելէ ետք հնարաւոր պիտի դառնար»[20]:

Անժխտելի է, որ «մեծ տերությունների հակամարտություն» ասելով՝ պետք է հասկանալ տվյալ պահին Թուրքիայի շուրջ առկա հակասությունները, իսկ սա ինքնին ենթադրում էր, որ ելնելով սեփական քաղաքական շահերից՝ մեծ տերությունները հայ ժողովրդի ազատագրական ձգտումները կարող էին օգտագործել ընդդեմ Թուրքիայի: Ինչպես Գանգրունին է խոստովանում, հայ կռվող տարրի կազմակերպումը դյուրին գործ չէր: Ստացվում է, որ հայ ժողովուրդն առանց լիարժեք կազմակերպված լինելու, ինչ-որ տերության հույսով, պետք է նետվեր պայքարի մեջ: Բայց չէ՞ որ այդ տերությունը չէր առաջնորդվում հայ ժողովրդին ազատագրելու անկեղծ նպատակով:

Ուրեմն, կարծում ենք՝ եթե Գանգրունու տեսակետը, թե մեծ տերությունների հակասություններից օգտվելը անհրաժեշտ էր, ճիշտ էր, ապա՝ դրանից օգտվելու մարտավարությունն էր սխալ: Հայ ազատագրական պայքարի ընթացքը և բալկանյան ժողովուրդների փորձը ցույց տվեցին, որ հակասություններից օգտվել պետք է նշանակեր առանց շտապելու, մանրակրկիտ նախապատրաստվելուց հետո միայն պատերազմի մեջ մտնել Թուրքիայի հետ կռվող որևէ տերության կողմից: Պարզապես չէր կարելի այն թյուր պատրանքն ունենալ, թե մի ցույցով կամ ահաբեկչությամբ հնարավոր է ձեռք բերել Թուրքիայի հետ հակասության մեջ գտնվող որևէ տերության միջամտությունը: Ամեն անգամ այդ միջամտությունը լիարժեք չէր լինում, և հայությունը մենակ, լիովին անպատրաստ էր մնում Թուրքիայի դեմ դիմաց: Սա, կարծում ենք, հայոց մեծ ողբերգության հիմնական պատճառներից մեկն էր:

Դրվատելի է, որ Հ. Գանգրունին հայոց ջարդերի պատճառների մեջ չի անտեսում «օտար մեծ տերությունների տխուր դերը»[21], բայց դրանով արդեն հակասական վիճակ է ստեղծում վերոհիշյալ դրույթի հետ: Այնուհետև հիշյալ գլխում՝ հատկապես հայ ազատագրական պայքարի գնահատման հարցում, Հ. Գանգրունին կրկնում է ինքն իրեն՝ ասելով՝ հայը զոհ էր, թուրքը ջարդարար: Ոչ ոք չի կարող սրան առարկել: Բայց ինչպես նա, այնպես էլ շատ այլ հեղինակներ լիարժեք չեն պատասխանում մեկ հարցի՝ ինչո՞ւ: Իսկ եթե փորձում են պատասխանել, պանթուրքիզմին գումարում են մեծ տերությունների խաբկանքը և վերջ: Գրեթե ամբողջովին անտեսվում են սեփական սխալները՝ մեր ժողովրդին զրկելով դրանցից սովորելու, դասեր քաղելու հնարավորությունից:

Այս գլխում Գանգրունին անդրադառնում է հայ ազատամարտի խորհրդահայ պատմագրությանը՝ քննադատելով բոլոր նրանց, ովքեր, ըստ նրա, սխալ դիրքերից են մեկնաբանել այն: Միանգամայն ճիշտ համարելով հայերի ռուսական կողմնորոշումը՝

[19] Նույն տեղում:
[20] Նույն տեղում:
[21] Նույն տեղում, էջ 41:

Գանգրունին ինքը ևս հանդես է գալիս որպես դրա կողմնակիցը: Ցավոք, նա բոլորովին չի ուզում նկատել Ռուսաստանի դերը հայոց Մեծ եղեռնի և Հայաստանի Հանրապետության (1918-1920 թթ.) անկման գործում:

Մի փոքրիկ ենթագլխով էլ Հ. Գանգրունին ներկայացնում է հայ-քրդական հարաբերությունները: Իրավացիորեն նշելով, որ հայ-քրդական համագործակցությունը չկայացավ և խորամուխ չլինելով պատճառների մեջ՝ բավարարվում է սոսկ տարբեր հեղինակներից (զորավար Սմբատ, Մալխաս, Ռ. Հովհաննիսյան և այլն) այդ մասին մեջբերումներ կատարելով: Ի վերջո, նա չի տեսնում այն պարզ ճշմարտությունը, որ քրդերի՝ քաղաքականապես հասուն չլինելու հանգամանքը հայ ազատամարտի ձախողման կարևորագույն պատճառներից էր:

Աշխատության Գ գլխում հեղինակը դարձյալ կրկնում է ինքն իրեն: Նույնիսկ վերնագիրը («Հայ ազատագրական պայքարի ընթացքը օսմանյան բռնատիրութեան օրով») գրեթե չի տարբերվում նախորդ գլխի վերնագրից: Նա կրկին անդրադառնում է «այդ շարժումների գնահատման հարցին մէջ» հայրենի պատմաբանների երկու մոտեցումներին: Դրանցից մեկի հեղինակները, նրա կարծիքով, Լեոն և Ա. Հովհաննիսյանն են, «որոնք իրենց գրաւոր ելոյթներուն մէջ կ'աշխատին քննադատել հայ յեղափոխութիւնը իր «անիմաստ» խիզախումներուն համար եւ կամ կ'աշխատին ջարդերու պատասխանատուները մեր յեղափոխական շարժումները նկատել Թրքահայաստանին մէջ»[22]: Երկրորդ մոտեցման հեղինակները, ըստ Գանգրունու, ֆիդայական շարժումները դիտելով որպես ազատագրական շարժման օրինակներ, «կը ձգտէին այդ շարժումներուն հագցնել միմիայն «գիւղացիական» շապիկ, եւ նկատելով որ, անոնք համընկած են թրքական հայասպանութեան ծրագրի գործադրութեան հետ ուրեմն զանոնք կը նկատեն «ձախող» և «սխալ»[23]: Կարծես թե Հ. Գանգրունու այս բաժանումները չեն հաջողվել: Ստացվում է, որ երկու պատմագիտական մոտեցումների հեղինակներն էլ հայ ազատագրական շարժումները համարել են սխալ և թուրքերի համար ջարդերի առիթներ տվող: Տարբերությունը միայն այն է, որ երկրորդ մոտեցման հեղինակները գնահատել են ֆիդայիների «խիզախումները»:

Իրականում խորհրդահայ պատմագրությունը սկզբում գնում էր այդ պայքարը կուսակցությունների կազմակերպածը համարելով՝ այն ժխտելու, իսկ ֆիդայական շարժումները գնահատելով՝ դրանք կուսակցություններից տարանջատելու ճանապարհով: Այնինչ, հայտնի է, որ ֆիդայական շարժումները, սկզբնավորվելով կուսակցություններից առաջ, այնուհետև ամբողջովին ղեկավարվում էին նրանց կողմից:

Հ. Գանգրունին, իր առանձնացրած մոտեցումներին համամիտ չլինելով, քննադատում է դրանք՝ դարձյալ նոր փաստերով փորձելով ապացուցել, որ հայ ազատագրական պայքարն օրինաչափ էր և պայմանավորված էր արևմտահայության

[22] Նույն տեղում, էջ 57:
[23] Նույն տեղում:

տնտեսական ծանր կացությամբ: Եվ այս առումով նա հայ հեղինակներից դարձյալ կատարում է բազմաթիվ մեջբերումներ՝ ավելորդ ծանրաբեռնելով իր աշխատությունը:

Հեղինակը հայ ազատագրական պայքարը կապում է հայ կուսակցությունների հետ, որը միանգամայն ճիշտ է: Ճիշտ է և դրվատելի նաև նրա այն կարծիքը, որ «Արևմտեան Հայաստանի ազատագրական պայքարը տարուեցաւ ո՛չ միասնական ճակատով»[24]:

Սակայն սրանից անմիջապես հետո գրում է. «Ներքին համերաշխութիւնը պակասեցաւ տեղ-տեղ, բայց յեղափոխական ուժերու միջեւ վճռական վայրկեանին կարելի եղաւ միասնութիւն ստեղծել՝ յանուն մեր ժողովուրդի ընդհանրական մտահոգութիւններու իրականացման»:

Եթէ 1890ի Գում-Գաբուի, 1894ի Սասունի, 1895-6ի Պապը-Ալիի, Սուէտիոյ, Շապին Գարահիսարի, Զէյթունի, Տրապիզոնի, Հայքի, Կեսարիոյ ընդվզումներուն մէջ Հնչակեան կուսակցութիւնը ստիպուեցաւ առանձին մղել ազատագրական պայքարը օսմանեան բռնատիրութեան դէմ, ապա Վանի Ա. և Բ., Շապին Գարահիսարի, Սասնոյ Բ. ապստամբութեան (1904), Սուէտիոյ, Հաճընի, Զէյթունի, Սիսի, Ատանայի, Սարդարապատի, Պաքուի կռիվներուն հայ քաղաքական բոլոր հոսանքները միացեալ ճակատ կրցան կազմել եւ դիմադրել թշնամիին»[25]:

Կարծում ենք, որ հեղինակը միմյանց հետ է շփոթում մի քանի հանգամանք. ա) Շեղվելով իր աշխատության շրջանակից՝ ակնարկում է 1915 թ. իրադարձությունները (նաև 1918 թ.՝ Բաքվի), բայց դրանք ազգային-ազատագրական կամ, իր արտահայտությամբ՝ հեղափոխական պայքար չէին, այլ՝ ինքնապաշտպանական կռիվներ: Իսկ այդ օրհասական կռվում հայ քաղաքական ուժերը միավորվելուց զատ այլ ելք չունեին: բ) Մեր ընդգծած դարձվածն այնքան էլ չի համապատասխանում իրականությանը. XIX դ. վերջի և XX դ. սկզբի (մինչև 1908 թ.) հայ ազգային ազատագրական պայքարում գրեթե ներքին համերաշխություն չի եղել (ի բացառյալ Վանի 1896 և 1915 թթ. կռիվների), այլ այն ընթացել է տարանջատ, որն ազդել է նրա արդյունավետության վրա: գ) Միասնական ճակատ ստեղծվել է միայն 1918 թ. մայիսյան հերոսամարտի ժամանակ, քանզի հակառակը կնշանակեր հայության վերջը:

Այնուհետև Հ. Գանգրունին առանձնացնում է հայ ազատագրական պայքարի երկու ճակատ՝ ներքին և արտաքին: Առաջինը լրտեսների, մատնիչների, ամիրաների ճակատն էր, որը կար 1890-ականից, իսկ երկրորդը՝ օտար պետությունների և օսմանյան այլ ժողովուրդների համագործակցության համար պայքարի ճակատը[26]: Բայց արդյո՞ք հեղինակը ճիշտ է: Կարծում ենք՝ դարձյալ ոչ: Հայ ազատագրական պայքարի հիմնական ճակատը Թուրքիան էր, որի դեմ պայքարի ընթացքում կարող էին լրտեսներ և մատնիչներ էլ լինել, բայց դրանց դեմ պայքարը որպես առանձին ճակատ ա-ռանձնացնելը տեղին չէ: Նույնը վերաբերում է մեծ տերություններին: Հայ ազատագրական պայքարը երբեք ուղղված չի եղել մեծ տերությունների դեմ: Իսկ

[24] Նույն տեղում, էջ 64:
[25] Նույն տեղում, էջ 64-65:
[26] Տե՛ս նույն տեղում, էջ 65-70:

ջանքերը նրանց կամ օսմանյան այլազգիների համակրանքի համար չի կարելի որակել որպես պայքարի ճակատ: Այլ հարց է, որ 1903 թ. հետո բացվեց հայ ազատագրական պայքարի կովկասյան ճակատը ևս:

Այնուհետև շեղվելով բուն նյութից՝ հեղինակը փորձում է վերլուծել իթթիհատի, մեծ տերությունների և այլ քաղաքական ուժերի հետ հարաբերությունները: Նրա տեսակետներին հատկանշական է այն, որ երբեք չի մեղադրում հնչակյաններին և փորձում է ապացուցել, որ հայ ազատագրական պայքարը սոցիալիստական բնույթ ևս ուներ, քանզի թե Թուրքիայում և թե Կովկասում նպատակ ուներ նաև քանդել ավատապետության հիմքերը: Դարձյալ մեղադրելով մեծ տերություններին՝ այդպես էլ չի կարողանում լիարժեք պատասխանել, թե ինչո՞ւ նրանք զոհաբերեցին Հայկական հարցը: Եվ վերջապես, Գանգրունին այն տեսակետն է հայտնում, որ ավելի ճիշտ էր համագործակցել ոչ թե իթթիհատի այլ՝ իթիլյաֆի հետ[27]: Հիշեցնել է տալիս կուսակցական հին համակրանքը: Արդյո՞ք իթիլյաֆի՝ իշխանության գալով, արևմտահայերը ձեռք կբերեին թեկուզև ինքնավարություն: Ոչ ոք չի կարող այս հարցին դրական պատասխան տալ:

Հ. Գանգրունու աշխատության Դ՝ «Հայ քաղաքական հոսանքները» գլուխը նվիրված է մեր երեք կուսակցություններին, սակայն ճիշտ չի վերնագրված: Այն պատճառով, որ դրանք նույնացվում են: Այնինչ քաղաքական հոսանքներն ընդգրկում են ավելի սահմանափակ թվով մարդկանց, որոնք ունեն սոսկ գաղափարական ընդհանրություններ, իսկ կուսակցությունները՝ ստվար գաղափարակից անդամներ, հստակ ծրագրային դրույթներ և դրանք կյանքի կոչելու մատնանշված միջոցներ: Բայց ահա «Հայ քաղաքական հոսանքները» վերնագրի տակ Հ. Գանգրունին ներկայացնում է Արմենական, Հնչակյան և Դաշնակցություն կուսակցությունները: Ընդ որում, սխալ տեսակետներ է արտահայտում Արմենական կուսակցության մասին՝ այն համարելով կազմակերպություն կամ «պուրժուական հոսանք»[28], գրում է, որ երբեք նման կուսակցություն չի եղել և իբրև թե, 1888-ի վերջերը Մ. Փորթուգալյանի ստեղծած «Հայոց հայրենասերների միության» շուրջը համախմբված մտավորականներն են իրենց համարել արմենականներ: Սա ամենևին չի համապատասխանում իրականությանը[29]:

---

[27] *Նույն տեղում, էջ 76:*

[28] *Նույն տեղում, էջ 77:*

[29] *Տե՛ս* **Ղազարյան Վ.,** *Արմենական կուսակցութիւնը, Պէյրութ, 1985, Կարապետյան Հ., Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ 1885-1914 թթ. Ե., 2003,* **Սարգսյան**

Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ Հ. Գանգրունին ավելի շատ ոչ թե ներկայացնում է սեփական տեսակետներն այս կազմակերպության մասին, այլ մեջբերումներ անելով Լ.Եոյից, Ալ. Մյասնիկյանից, Գ. Ղարաջյանից և Խ. Բարսեղյանից՝ թերագնահատում է արմենականներին՝ նրանց համարելով բուրժուական, նացիոնալիստական: Մինչդեռ այս կուսակցությունը երբեք չի արտահայտել բուրժուազիայի շահերը (Արևմտյան Հայաստանում այդ խավը նույնիսկ չէր էլ ձևավորվել), այլ որդեգրել է Արևմտյան Հայաստանն ազատագրելու նպատակը, որն իրագործելու միջոցների մեջ հաճախ ավելի խոհեմ ու իրատես է եղել, քան հնչակյանները կամ դաշնակցականները:

Առավել շատ և ընդգծված դրվատանքով է խոսում Գանգրունին հնչակյանների մասին: Ընդ որում, ոչ թե նկարագրում է կուսակցության ձևավորումը, խորանում նրա մոտակա ծրագրերի մեջ, այլ՝ ավելի շատ փորձում է ապացուցել նրա՝ որպես սոցիալիզմը հեռակա նպատակ որդեգրելու իրավացիությունը: Հնչակյան կուսակցությունն, ըստ Գանգրունու, պայքարել է ոչ միայն հայ, այլև ճնշված այլ ժողովուրդների արդար իրավունքների համար: Այն մարքսիստական կուսակցություն է, միաժամանակ՝ ազգային և ոչ երբեք՝ ազգայնական[30]: Նա բազմաթիվ մեջբերումներ է կատարում կուսակցության ծրագրային դրույթներից, տարբեր հեղինակներից և պարբերական մամուլից՝ հնչակյան կուսակցության սոցիալիստական էությունը բացահայտելու և հիմնավորելու համար:

Ոչ ոք չի վիճարկում մարդկանց հավասարության համար պայքարելու և դրան հասնելու նպատակի իրավացիությունը: Սակայն չպետք է մոռանալ մի հանգամանք, որ ըստ մարքսիստական տեսության, սոցիալիզմին հասնելու համար պետք է ձևավորված լիներ կապիտալիստական հասարակարգը, որը տապալելու շարժիչ ուժը պրոլետարիատն էր: Բայց Թուրքիան դեռևս մարքսիզմի ձևաչափով կապիտալիզմ չէր էլ թևակոխել, և այնտեղ չկար լիարժեք ձևավորված պրոլետարիատ: Ուրեմն, սոցիալիզմից առաջ կարևորը ազգային ազատագրության խնդիրն էր, որի շուրջ անհրաժեշտ էր առանց դասային խտրության բոլոր տարրերի միավորումը: Սա էր հայ քաղաքական կուսակցությունների առաջնային խնդիրը և ոչ թե ընկերվարական ավելորդ վիճաբանությունը, որը խանգարեց «Հայ Յեղափոխականներու Դաշնակցութեան ստեղծմանը և նպաստեց Հնչակեան կուսակցութեան պառակտմանը»:

Հ. Գանգրունին գրում է. «Հնչակեան Կուս.ը եղած է ազգային եւ երբեք ազգայնական, ուզած է հայ ժողովուրդը ազատագրել առանց ճնշումի ենթարկելու այլ ժողովուրդները եւ անոնց ալ ընկերային արդար իրաւունքներուն համար պայքարած է»[31]: Բայց մի՞թե ազգայնական լինել անպայման նշանակում է ճնշել այլ ժողովրդի: Ամենևին ոչ: Դա ակնհայտ հնացած բոլշևիկյան դրույթ է:

Ս., *Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն 1908-1921 թթ., Ե., 2009,* **Կոստանդյան Է.,** *Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության, Ե., 2005, և այլն:*

[30] *Տե՛ս նույն տեղում, էջ 82-83:*

[31] *Նույն տեղում, էջ 82:*

Դաշնակցություն կուսակցության մասին խոսելիս նա նույնպես փորձում է որդեգրել թերագնահատման ճանապարհը: Անցնելով իր աշխատության ընդգրկելիք ժամանակագրական սահմանը՝ նա այդ կուսակցության գործունեությունը հետևյալ կերպ է ներկայացնում. «Դաշնակցութիւնը 1890-1900-շրջանին դեռ տարածուած չէր Արևմտահայաստանի մէջ, սակայն յետագային լայն չափով իր մասնաճիւղերը, ֆետայիները, մամուլը ունեցաւ: Անոնք զուտ ազգայնական հողի վրա գործեցին, մասնակցեցան 1896 թ. Վանի, նոյն թուի՝ Պանք Օթոմանի եւ 1897ի Խանասորի արշավանքներուն եւ 1904ի Սասնոյ Բ. ապստամբութիւնը կազմակերպեցին: 1905ի «Երլտրզի ռումբը» պայթեցուցին, 1903ի Էջմիածնի կալուածներու գրաւման շրջանին ցարին դէմ պայքարեցան, տեռորներ կազմակերպեցին, բախումներուն մասնակցեցան, ազատագրական պայքարի մէջ իրենց բաժինը ունեցան: Բանուորական շարժումներէ հեռու մնացին Կովկասի մէջ: Հակադրուեցան ռուս Ս. դեմոկրատներուն: 1907ին Վիեննայի համագումարին Սոցիալիզմը ընդունեցին, բայց չհետեւեցան անոր: Իթթիհատի հետ միացան՝ Համիտը տապալելու համար, սակայն տարուեցան անոր սուտ խոստումներէն եւ տուժեցին:

…Իրենց քաղաքական մեղքը պիտի մնայ՝ իթթիհատի հետ սերտակցութիւնը 1907-1914 և 1921 թ. Փետր. ապստամբութիւնը եւ Արեւմտեան օրիէնթացիան: Պիտի գնահատուի Սուլթանիզմի դէմ իրենց անշահախնդիր, հետևողական եւ ազնիւ պայքարը»[32]*: Ինչպես տեսնում ենք, հեղինակը պարզապես թվարկում է Դաշնակցության կատարած գործողությունները՝ առանց գնահատականների կամ հետևության: Բայց այս տողերի տակ նաև զգում ես ակնարկված մեղադրանքները. նախ՝ շեշտվում է, որ դաշնակցությունը ազգայնական էր ու նաև, սոցիալիզմն ընդունելով չի հետևել նրան: Իսկ բացահայտ մեղադրանքները երիտթուրքերի հետ համագործակցության և Փետրվարյան ապստամբության հետ են կապված: Սակայն անաչառ լինելու համար պետք է շեշտել, որ երիտթուրք-ՀՅԴ համագործակցությունը գոնե սկզբնական շրջանում միանգամայն օրինաչափ էր, ինչպես որ օրինաչափ էր սոցիալիզմի գաղափարախոսությունը այդ կուսակցության կողմից հետին պլան մղած լինելու հանգամանքը: Փետրվարյան ապստամբության մասին նրա կարծիքին չենք ուզում անդրադառնալ, քանզի այդ չէ մեր խնդիրը:*

Հ. Գանգրունին գնահատում է այդ կուսակցության հետևողական և ազնիվ պայքարը սուլթանիզմի դեմ: Բայց այդ ազնվության վրա (ինչպես և հնչակյանների) ոչ մեկը չի կասկածում: Ավելի ճիշտ կլիներ, եթե հեղինակը քննարկեր այդ պայքարի արդյունավետության հարցը, փոխանակ քննադատելու Մ. Վարանդյանի և այլոց դրույթները իր կուսակցության որդեգրած՝ սոցիալիզմի գաղափարախոսության դեմ, որի համար պայքարի ոչ անհրաժեշտությունն էր առաջնային, և ոչ էլ ժամանակն էր հասունացել:

---

[32] *Նույն տեղում, էջ 95-96:*

Բ և Գ գլուխների գրեթե նույն վերնագիրն է կրում աշխատության Ե գլուխը («Հայ Յեղափոխական շարժումները»): Բայց այստեղ, ի տարբերություն նախորդ երկուսի, որոշ չափով նկարագրվում են հնչակյան հետագա ձեռնարկները՝ մինչև այդ անդրադառնալով Էրզրումի դեպքին (1890 թ. հունիսի 20): Պետք է շեշտել, որ նա հնչակյան ձեռնարկները (Գում-Գափուի ցույցը, Սասունի և Զեյթունի ապստամբությունները և այլն) ներկայացնում է ոչ համակարգված: Դրանք կամ ինքն է նկարագրում, կամ տալիս է այլոց վկայությամբ: Երբեմն ներկայացնում է հայեցակարգեր, բայց դրանք չեն բխում հնչակյան ձեռնարկների արդյունավետության ելակետից: Այսպես, Գում-Գափուի ցույցին անդրադառնալիս նա, դարձյալ քննադատելով Լեոյին, որը եվրոպական միջամտությանն առնչվող ձեռնարկների հետ է կապում հայոց ջարդերը, գրում է. «Օսմանեան կայսրութեան պատմութեան մէջ մինչեւ 1890 թուականը ո՛չ իսկ թուրքերը համարձակած են այդ կարողութեամբ ցոյց կազմակերպել: Աշխատաւոր ու գիւղացի այդ ցուցարարները ստիպումի տակ քալեցին դէպի Բ. դուռ»[33]:

Մի պահ ընդունենք, որ այս ցույցը ժողովրդական զանգվածների ընդգրկվածությամբ, իրոք, Թուրքիայի պատմության մեջ աննախադեպ էր: Բայց, ինչ տվեց այն: Կարևորն այս հարցի պատասխանն է, որ հեղինակը չի կարողանում տալ: Նրա կարծիքով, սա սկիզբն էր «ազատագրական վսեմ շարժումին» Արևմտյան Հայաստանում:

Այս ցույցին անդրադառնալուց հետո հեղինակը դարձյալ շեղվում է դեպի իր սիրած թեման և զանազան մեջբերումներով ձգտում է ապացուցել, որ հայ ազատագրական պայքարը պայմանավոր- ված էր Թուրքիայի դաժան քաղաքականությամբ, քննադատում է Ս. Մարկոսյանին և Լեոյին, որոնք Գում-Գափուն համարել են «ա-վանտյուրա»: Այնուհետև նա գրում է. «1890ի հուլիս 15ի Գում Գափուի ցոյցը խոշոր անդրադարձ ունեցաւ Եւրոպայի հանրային կարծիքին մոտ»[34]: Եվ դարձյալ բերում է այդ մասին վկայություններ՝ ցույցն «ավանտյուրա» համարողներին կոչելով «ավանտյուրիստ պատմաբաններ»: Ենթադրենք, թե ցույցն իսկապես ազդել է Եվրոպայի հանրային կարծիքի վրա, բայց այդ կարծիքով փոխվե՞լ է արևմտահայության կացությունը: Իհարկե, ոչ:

Ընդհանուր առմամբ, Գանգրունին այն տպավորությունն է ստեղծում, թե պատվավոր մահը նախընտրելի էր ստրկական կյանքից: Բայց, ինչո՞ւ զոհվել, երբ թշնամին հենց այդ էր ուզում: Ինչո՞ւ չընտրել պայքարի այնպիսի ձևեր, որոնք ավելի քիչ զոհողություն-ներով ավելի մեծ արդյունք կարող էին բերել: Աշխատության Զ գլխում («Հայ և օտար վկայութիւններ օսմանեան բռնակալութեան եւ հայ ազատագրական պայքարի մասին») Հ. Գանգրունին նոր խոսք չի ասում, այլ կրկին փորձում է ապացուցել, որ՝ ա) հայ ազա-տագրական պայքարն օրինաչափ էր, բ) դրա սկզբնավորողը Հնչակյան կուսակցությունն էր, որի գործողությունների ճշմարտացիությունն ընդունում է

[33] Նույն տեղում, էջ 109:
[34] Նույն տեղում, էջ 114:

անվերապահորեն, գ) թերագնահատում է Արմենական և Դաշնակցություն կուսակցություններին, դ) կրկնելով իրեն՝ անդրադառնում է Հնչակյանների կողմից սոցիալիզմը որդեգրելու խնդրին՝ այն միանգամայն ճիշտ համարելով: Այս վերջին՝ դ կետին է նվիրված աշխատության Է՝ «Կուսակցական ներքին տարակարծութիւններ» գլուխը: Այստեղ անդրադառնալով կուսակցության պառակտմանը (1896 թ., Լոնդոն) և լինելով Ա. Նազարբեկյանի թևի կողմնակիցը՝ դիմում է տարաբնույթ փաստերի՝ փորձելով ապացուցել, թե ճիշտ էր սոցիալիզմի որդեգրումը: Ճիշտ կամ սխալ լինելու հարցը մի կողմ թողնելով՝ կարելի է միայն մի եզրակացություն կատարել՝ սոցիալիզմի որդեգրման կամ դրանից լիարժեք հրաժարվելու դեպքում էլ արևմտահայության ազատագրման խնդիրը պայքարի նման մեթոդներով չէր լուծվելու: Այս խնդրի գիտակցումը միանգամայն անտեղի է դարձնում դրա ընդունման կամ մերժման առավելությունները փաստելու ջանքերը, ուստի, այն տպավորությունն է առաջանում, որ այդ խնդրում խորանալը կուսակցության արժևորման միտումով է պայմանավորված:

Ը գլուխը («Օսմանեան բռնատիրութեան դէմ հայ ազատագրական պայքարի գնահատման հարցի շուրջը») նոր ասելիք չի պարունակում և դարձյալ նպատակ ունի ցույց տալու հայ ազատագրական պայքարի օրինաչափությունը, ապացուցելու, որ հայոց ջարդերը պայմանավորված չէին այդ պայքարով կամ հայ կուսակցությունների գործունեությամբ: Նշենք, որ այս առումով նրա բերած փաստերը բավական առատ են, սակայն գիրքն այդ առատ փաստերով գիտական նորույթ չի բերում, այլ շրջանառության մեջ են դրվում հետևյալ հայեցակարգային մոտեցումները. ա) Հայ ազատագրական պայքարը պայմանավորված էր Թուրքիայի՝ տնտեսական և ազգային դաժան քաղաքականությամբ, բ) Հնչակյան կուսակցությունը հայ ազատամարտի սկզբնավորողն էր, ճիշտ էր նրա մարտավարական ուղին, ինչպես նաև՝ նրա կողմից սոցիալիզմի որդեգրումը, գ) մեծ տերությունները խաբել են հայ ժողովրդին:

Գրքի Բ մասը («Հայ Յեղափոխությունը իթթիհատի բռնատիրութեան շրջանին») վերլուծելը մեր նպատակը չէ, որովհետև, նախ՝ մենք փորձում ենք գնահատել մինչև 1908 թ. պատմագիտական միտքը և երկրորդ՝ իթթիհատի բռնատիրության շրջանում հայ հեղափոխություն չի եղել: Առանձին հետաքրքրություն չեն ներկայացնում և հայեցակարգային առումով նորություն չեն նաև ՀՅԴ-իթթիհատ հարաբերություններին Գանգրունու անդրադարձները: Նա հիմնականում կրկնում է Սապահ-Գյուլյանի և մյուս հեղինակների այն տարածված տեսակետը, որը մեղադրում է ՀՅԴ-ին իթթիհատի հետ համագործակցության համար և ճիշտ համարում Հնչակյան կուսակցությանը, որը մերժեց այդ համագործակցությունը[35]:

Հրանտ Գանգրունու աշխատությունը գնահատելի է նրանով, որ բովանդակում է փաստական առատ նյութ Հնչակյան կուսակցության գործունեության վերաբերյալ: Բայց

---

[35] Առանձին քննել ենք հնչակյան նշանավոր պատմագիր Ս. Սապահ-Գյուլյանի մոտեցումները, հատկապես՝ «Պատասխանատուները» (Փրովիտէնս, 1916) սկզբունքային աշխատության հիմնական դրույթները, ուստի այստեղ ավելորդ ենք համարում մանրամասնել խնդիրը:

այդ նյութից անհրաժեշտ եզրակացությունները կամ բացակայում են, կամ ընդունելի չեն, կամ էլ թերի են: Սա է ճշմարտությունը:

НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНАЯ БОРЬБА АРМЯНСКОГО НАРОДА В 1885-1908 ГГ. В ОЦЕНКЕ ГРАНТА ГАНГРУНИ

САРГСЯН С. Т.

Резюме

В 1880-ых годах – в период формирования национальных партий, освободительная борьба армянского народа переживала бурный подъем, став более организованной и зрелой. Однако в 1908 г. ввиду многих объективных и субъективных причин она завершилась печальным поражением.

Младотурецкий переворот и конституция 1908 г. притупили бдительность не только рядовых граждан, но и представителей партий и опытных руководителей борьбы. Воспользовавшись созданной ситуацией и благоприятными условиями Первой мировой войны, младотурки сумели осуществить свой коварный план – решить Армянский вопрос путем геноцида.

Освободительной борьбе 1885-1908 гг. посвящено множество научных работ. К этой теме обращался также Грант Гангруни. Видный деятель Социал-демократической партии Гнчак – Г. Гангруни, излагая историю своей партии, пытается показать, что ошибки и недостатки имели место в деятельности всех партий, за исключением партии Гнчак, забывая при этом о том, что история самой партии Гнчак также изобилует ошибками.